ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՓԱՓԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Հարություն Փափազյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հարություն Փափազյանը (ներկայացուցիչ՝ Ա. Կոչուբաև) դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի մայիսի 31-ին)՝ խնդրելով.

«1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 15-րդ հոդվածի

«Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողները վարչական իրավախախտումների համար կրում են կարգապահական պատասխանատվություն:

Որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնները խախտելու, մաքսային կանոնները խախտելու, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության պահանջները խախտելու համար

սույն մասում նշված անձինք վարչական պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով:

Սույն հոդվածի առաջին մասում նշված դեպքերում այն մարմինները (պաշտոնատար անձինք), որոնց վերապահված է վարչական տույժեր նշանակելու իրավունք, կարող են տույժեր նշանակելու փոխարեն իրավախախտումների վերաբերյալ նյութերը հանձնել համապատասխան մարմիններին՝ մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար» դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 79-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր»:

2. Դիմողի կարծիքով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 15-րդ հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողները վարչական իրավախախտումների համար կրում են կարգապահական պատասխանատվություն: Որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնները խախտելու, մաքսային կանոնները խախտելու, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության պահանջները խախտելու համար սույն մասում նշված անձինք վարչական պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով:

Սույն հոդվածի առաջին մասում նշված դեպքերում այն մարմինները (պաշտոնատար անձինք), որոնց վերապահված է վարչական տույժեր նշանակելու իրավունք, կարող են տույժեր նշանակելու փոխարեն իրավախախտումների վերաբերյալ նյութերը հանձնել համապատասխան մարմիններին՝ մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար» դրույթները չեն համապատասխանում Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածների պահանջներին:

Դիմողը, նշելով, որ Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասը կարգավորում է երկու խումբ իրավահարաբերություններ, գտնում է, որ առաջին խումբ իրավահարաբերու-

թյունների համար Օրենսգրքի 15-րդ հոդվածը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին՝ վերոնշյալ հոդվածի 3-րդ մասով սահմանելով «կարող են տույժեր նշանակելու փոխարեն իրավախախտումների վերաբերյալ նյութերը հանձնել համապատասխան մարմիններին՝ մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար» եզրույթը: Ըստ դիմողի՝ քննարկվող հոդվածի 3-րդ մասն իմաստազրկում է նույն հոդվածի 1-ին մասի իմպերատիվ պահանջը՝ այդպիսով իմաստազրկելով Օրենսգրքի 15-րդ հոդվածի ողջ տրամաբանությունը:

Դիմողը կարծում է, որ այդ սահմանումն իրավակիրառ մարմնին լիազորում է չափազանց մեծ հայեցողական լիազորությամբ և ստացվում է, որ օրենքն օժտված չէ որոշակիությամբ, այսինքն՝ անձը լինելով վերոնշյալ իրավահարաբերություններում, հնարավորություն չի ստանում գնահատելու իր վարքագծի արդյունքում վրա հասնող հետևանքները:

Հղումներ կատարելով իրավական որոշակիության սկզբունքի առնչությամբ Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, վերլուծելով Օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորումը և համադրելով այն օրենսդրական այլ դրույթների հետ՝ դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 15-րդ հոդվածը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որոշակիությամբ և չի ապահովում նորմի կանխատեսելիությանը ներկայացվող պահանջները:

3. Պատասխանողը, չանդրադառնալով վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցին, գտնում է, որ դիմողը, ձևականորեն բարձրացնելով իրավական նորմի սահմանադրականության հարց, իրականում առաջ է քաշում իրավանորմի կիրառման իրավաչափության հարց:

Պատասխանողը հղում է կատարում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասին, համաձայն որի՝ անհատական դիմումներով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատա-

կան դիմումն ակնհայտ անհիմն է: Պատասխանողի կարծիքով՝ անհատական դիմումում պատշաճ հիմնավորված չէ վիճարկվող նորմի ենթադրյալ հակասահմանադրականությունը:

Ելնելով վերոնշյալից՝ պատասխանողը խնդրում է սույն գործի վարույթը կարճել:

4. Դիմումի և վերջինիս կից փաստաթղթերի ուսումնասիրությունից ու վերլուծությունից հետևում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման՝ ներքոնշյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են Օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր: Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ Օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում: Օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ անհատական դիմումով գործի քննությունը, ի լրումն Օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին համապատասխան՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Նշված նորմի հիման վրա Օրենքը սահմանում է

անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական պահանջները: Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Այդ հիմքերն են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ դիմողը վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է դիմողի՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման համաձայն՝ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե անձի սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալվում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: Նշված որոշման համաձայն՝ « (...) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ

իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…):

(…)

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ (…) դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Վերոգրյալի համատեքստում, Սահմանադրական դատարանն արձանագրելով, որ Սահմանադրական դատարան ներկայացված սույն անհատական դիմումը ենթակա է քննության կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակում, գտնում է, որ դիմողը չի ներկայացրել Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և, ըստ այդմ, Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների լույսի ներքո բավարար փաստարկներ/հիմնավորումներ: Դիմողի փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ վերջինս չի ներկայացրել հիմնավորումներ իր՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթի կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ: Նման պայմաններում դիմողը չի պահպանել վերոշարադրյալ օրենսդրական պահանջները, ուստի՝ դիմումն ակնհայտ անհիմն է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 69-րդ հոդվածի 1-ին, 2 և 5-րդ մասերի պահանջները՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Հարություն Փափազյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

15 հոկտեմբերի 2021 թվականի
ՍԴԱՈ-204